ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 մայիսի 2018 թվականի N 59-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 18-ի N 46-Ն որոշման 2-րդ կետը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 2018 թվականի բյուջեում կատարել վերաբաշխում՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել համայնքապետարանի առաջատար մասնագետ Ռուզաննա Սարգսյանին կատարել նախահաշվի համապատասխան փոփոխությունները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2018 թվականի մայիսի 4
գ.Գետամեջ

Հավելված
Գեղարքունիքի համայնքի ղեկավարի 2018 թվականի
մայիսի 4-ի N 59-Ա որոշումից

Ծրագիր	Հոդված	հոդվածի անվանումը	2018 թվականի հունվարի 16-ի դրությամբ	պակասեցում /-/ կամ ավելացում /+/	ճշտված բյուջե
		Ծախսային մաս			
8-2-4	4269	Հատուկ նպատակային այլ նյութեր	150.0	-150.0	0.0
8-2-4	4267	Կենցաղային և հանրային սննդի նյութեր	0.0	150.0	150.0
		Ընդամենը ծախսեր	***150.0***		***150.0***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 մայիսի 2018 թվականի N 60-Ա

ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Ջոնիկ Մարտիրոսյանին պատկանող բնակելի կառուցապատման հողամասին և շինությանը /հիմք՝ որակավորման վկայական ունեցող անձի կողմից կազմված հողամասի հատակագիծ, կադաստրային ծածկագիր՝ 07-025-0102-0009/ տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Գետամեջ 21-րդ փողոց N 2:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանում՝ հասցեի պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

2018 թվականի մայիսի 4
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 մայիսի 2018 թվականի N 61-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի «բ)» ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Համարել օրինական Ջոնիկ Մարտիրոսյանին պատկանող Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 21-րդ փողոցի 2-րդ հասցեի բնակելի կառուցապատման հողամասում (կադաստրային ծածկագիր՝ 07-025-0102-0009) ինքնակամ՝ 2005 թվականին կառուցված սանհանգույցը՝ 2,25 քառակուսի մետր և անասնագոմը՝ 47,54 քառակուսի մետր արտաքին մակերեսներով, քանի որ.

1) դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,

2) դրանք կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

2. Ինքնակամ շինությունների օրինականացման վճարները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) օժանդակ շինությունների յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար՝ 780 (յոթ հարյուր ութսուն) դրամ:

3. Ջոնիկ Մարտիրոսյանը պարտավոր է վճարել Գետամեջի համայնքապետարանի 900115112063 հաշվեհամարին 38 840 (երեսունութ հազար ութ հարյուր քառասուն) դրամ՝ օժանդակ շինությունների օրինականացման վճար.

4. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2018 թվականի մարտի
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 մայիսի 2018 թվականի N 62-Ա

ՋՈՆԻԿ ԱՐՏԱՎԱԶԴԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ 07-025-0102-0009 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՎԵԼԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, նկատի ունենալով, Ջոնիկ Մարտիրոսյանին հատկացված հողամասից քարտեզագրման արդյունքում հաշվառված ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակության օգտագործելու համար, չի խոչընդոտում հողամասերի նպատակային օգտագործմանը, ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման, ինչպես նաև հնագիտական, պատմամշակութային հողօգտագործողների պահպանության և անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ, հիմք ընդունելով Ջոնիկ Մարտիրոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Ջոնիկ Մարտիրոսյանի սեփականության իրավունքը համայնք Գետամեջ 21-րդ փողոց N 2 հասցեում գտնվող, ըստ կադաստրային քարտեզագրման 07-025-0102-0009 ծածկագրով փաստացի օգտագործվող 0,06629 հեկտար հողամասի նկատմամբ, որը նրա կողմից օգտագործվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:
2. Սույն որոշմամբ ծագող իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանումում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

2018 թվականի մայիսի 4
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 մայիսի 2018 թվականի N 63-Ա

ՄԱՅԻՍԻ 9-Ի՝ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ***որոշում եմ.***

1. Մայիսի 9-ի՝ Հաղթանակի և խաղաղության տոնի միջոցառման կազմակերպման և անցկացման համար համայնքի 2018 թվականի բյուջեի 08.2.4 ծրագրի 4267 «-Կենցաղային և հանրային սննդի նյութեր» հոդվածից հատկացնել 150 000 (մեկ հարյուր հիսուն հազար) դրամ՝ սննդամթերքներ և ըմպելիքներ ձեռք բերելու նպատակով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2018 թվականի մայիսի 5
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 մայիսի 2018 թվականի N 64-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 1-Ի N 27-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ղեկավարի 2018 թվականի փետրվարի 1-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջի համայնքապետարանի կարիքների համար 2018 թվականին կատարվող գնումների պլանը հաստատելու մասին» N 27-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2018 թվականի մայիսի
գ.Գետամեջ

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ղեկավարի
2018 թվականի մայիսի 7-ի N 64-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ 2018 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐՎՈՂ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ (ՓՈՓՈԽՎԱԾ)

Պատվիրատուն՝ Գետամեջի համայնքապետարան
(ըստ բյուջետային ծախսերի գերատեսչական դասակարգման)՝ 207025
Ծրագիրը՝ Համայնքի 2018 թվականի բյուջեից իրականացվող
Անվանումը՝ Օրենսդիր և գործադիր մարմինների պետական կառավարում
Բաժին 01 Խումբ 1 դաս 1 ծրագիր 51

Միջանցիկ կոդը՝ ըստ CPV դասակարգման	Անվանումը	Գնման ձևը (ընթացակարգը)	Չափման միավորը	Միավորի գինը	Ընդամենը ծախսերը /դրամ/	Քանակը
1	2	3	4	5	6	7
30190000	Զանազան գրասենյակային նյութեր	ՄԱ	դրամ		300000	1
09132200	Բենզին ռեգուլյար	ՄԱ	լիտր		950000	1
32324900	Վարչական սարքավորումներ	ՄԱ	դրամ		955000	1
44161270	Շինությունների կառուցում	ՄԱ			700000	
48000000	Համակարգչային ծրագիր	ՄԱ			298000	4
65300000	Էներգետիկ ծառայություններ	ՄԱ	կվտ/ժ		490000	
64210000	Հեռախոսավարձ	ՄԱ	դրամ		370000	1
66511170	ապահովագրական ծառայություն	ՄԱ	դրամ		34000	
79211150	Աուդիտորական ծառայություն	ՄԱ	դրամ		300000	
31500000	Հատուկ նպատակային այլ նյութեր	ՄԱ	դրամ		200000	
79631200	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ	ՄԱ	դրամ		30000	
50311120	Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	ՄԱ	դրամ		40000	
50110000	Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	ՄԱ	դրամ		160000	1
72411700	Ընդհանուր բնույթի այլ ծառայութ.	ՄԱ	դրամ		170000	
	Ընդամենը				4997000	
Անվանումը՝ Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ						
Բաժին 01 Խումբ 3 դաս 3 ծրագիր 51						
72700000	Համակարգչային ծառայություններ	ՄԱ	դրամ		116000	1
	Ընդամենը				116000	
Անվանումը՝ Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ						
Բաժին 01 Խումբ 6 դաս 1 ծրագիր 51						
99600000	Նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպ.	ԳՇԾ	դրամ		7000	1
70000000	Մասնագիտական ծառայություն	ՄԱ	դրամ		300000	
99600000	Պարդադիր վճարներ	ԳՇԾ	դրամ		10000	
35121320	Անվտանգության տեսախցիկներ	ՄԱ	դրամ		900000	
90620000	ընդհանուր բնույթի այլ	ՄԱ	դրամ		300000	
	Ընդամենը				1517000	

Անվանումը՝ Քաղաքացիական պաշտպանություն						
Բաժին 02 Խումբ 2 դաս 1 ծրագիր 51						
75222000	Ծառայություններ քաղաքացիական պաշտպանության ոլորտում	ՄԱ	դրամ		10000	1
	Ընդամենը				10000	
Անվանումը՝ Պաշտպանություն/ այլ դասերին չպատկանող						
Բաժին 02 Խումբ 5 դաս 1 ծրագիր 51						
75220000	Ծառայություններ պաշտպանության ոլորտում	ՄԱ	դրամ		10000	1
	Ընդամենը				10000	
Անվանումը՝ Փրկարար ծառայություն						
Բաժին 03 Խումբ 2 դաս 1 ծրագիր 51						
75251500	Փրկարարական ծառայություններ	ՄԱ	դրամ		10000	1
	Ընդամենը				10000	
Անվանումը՝ Ճանապարհային տրանսպորտ						
Բաժին 04 Խումբ 5 դաս 1 ծրագիր 51						
	Աշխատանք					
45231187	Փողոցների վերանորոգում	ԳՀ	քմ		5100000	1
71241200	Նախահետազոտական ծախսեր	ՄԱ	քմ		800000	1
	Ընդամենը				5900000	
Անվանումը՝ Աղբահանում						
Բաժին 05 Խումբ 1 դաս 1 ծրագիր 51						
	Ծառայություն					
90500000	Աղբահանում	ՄԱ	դրամ		900000	1
	Ընդամենը				900000	

Բաժին 05 Խումբ 6 դաս 1 ծրագիր 51						
	Ծառայություն					
99600000	Պարտադիր վճարներ	ԳՇԾ	դրամ		20000	
	Ընդամենը				20000	
Բաժին 06 Խումբ 4 դաս 1 ծրագիր 51						
	Ծառայություն					
65300000	Էներգետիկ ծառայություն	ՄԱ	կվտ/ժ		200000	1
	Աշխատանք					
31521600	Փողոցների լուսավորություն	ԳՀ			2100000	
71241200	Փողոցների լուսավորություն	ՄԱ			600000	
	Ընդամենը				2900000	
Բաժին 08 Խումբ 2 դաս 4 ծրագիր 51						
	Ապրանքներ					
15800000	Նվերներ	ՄԱ	դրամ		150000	1
	Ծառայություն					
75110000	Ընդհանուր բնույթի այլ ծառայութ.	ՄԱ	դրամ		50000	1
	Ընդամենը				200000	
Բաժին 09 Խումբ 2 դաս 1 ծրագիր 51						
	Ապրանքներ					
18530000	գույքի ձեռք բերում	ՄԱ	դրամ		900000	1
	Ընդամենը				900000	